554 Մարմարե սալաքար, *վրան փորագրված է.*

«1336 յամ՝ եկն ախտ ի քաղաքն Սիս... ողորմութեամբ քով սատակեսցես զքշնամիս իմ, կորուսցէս զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ (Սաղմ. ՃԽԹ): Տեսցեն ատելիք իմ եւ ամաչեսցեն, զի դու Տէր օգնեցեր ինձ եւ մխիթարեցեր զիս (Սազմ. ՁԵ)»:

Հրատ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 381,

Кучук-Иоаннесов, Армянская надпись из Таганрога, "Древности Восточные", т. IV, М., 1911, էջ 11:

ՄԱՅԿՈՊ

(Կրասնոդարի երկրամասի Ադիգեյական ինքնավար մարզ)

Հնագույն հայկական հուշարձաններ այստեղ չեն պահպանվել: Միակ հայերեն վիմագրությունը հայտնաբերվել է 1869 թ. Իվան Սերեգայի կողմից Խանսկայա և Բելորեչենսկայա ստանիցաների արանքում[1]*: Դա Բելայա գետի ափին եղած կիսավեր եկեղեցու բարավորի քարն է, որի վրա ուռուցիկ տառերով փորագրված է եղել.*

555. ԿԱՏԱՐԵՑԱՒ ԵԿԵՂԵՑԻՍ / ՁԵՌԱՄԲ ՔԱՐԳՈՐԾ / ԽՐԸՄՊԷԻՆ ԿԱՖԱՑՈՒՆ:

Մանոթ. Քուչուկ-Հովհաննիսյանը վերծանել է սխալներով և թվագրել է ՈԻ (1171 թ.) Այս արձանագրության հիման վրա նա ենթադրել է, թե «հայ գաղթականները հարավային Ռուսիայում ապրել են 12-րդ դարի երկրորդ կեսից[2]*: Նույն սխալը կրկնել է Միխ. Լոժկինը*[3]*: Լ. Ս. Խաչիկյանի համոզիչ կարծիքով Խրըմպեյ Կաֆայեցի քարգործը եղել է ղրիմեցի նշանավոր տաղասաց Սիմոն Կաֆայեցու հայրը: Հետևաբար, Բելորեչենսկի եկեղեցին կառուցվել է ոչ թե 1171, այլ 1650-ական թվականներին*[4]*:*

556. Հուշատախտակ *սև մարմարից, վրան ելնդավոր տառերով՝ 7 տող.*

ЗДЕСЬ С 1916 ПО 1918 Г./ ЖИЛ ОДИН ИЗ РУКОВОДИТЕЛЕЙ/ РЕВОЛЮЦИОННОЙ МОЛОДЕЖИ МАЙКОПА,/ АКТИВНЫЙ УЧАСТНИК ГРАЖДАНСКОЙ/ И ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙН/ СЕРГЕЙ ГЕОРГИЕВИЧ/ САРКИСОВ.

---

1 М. Ложкин, об армянской церкви XII века в Белореченске. Տե՛ս Հայ արվեստին նվիրված Երկրորդ միջազգային սիմպոզիումի թեզիսներ, Երևան, 1978, էջ 2 և 8: Հմմտ. Н. Марр, Надгробный камень из Семиречья с армянской надписью 1323 г. ЗВАРО, т. VIII, с. 344-345. В. В. Бартольд, Очерк истории Семиречья, Фрунзе, 1945, с. 1945, с. 45: Տե՛ս նաև՝ ՊԲՀ, 1972, № 4, էջ 243-244:

2 Х. Кучук-Иоаннесов, Армянская надпись XII столетия. МАК, вып. III, М., 1893, с. 106-109, илл. 79.

3 «Սովետական Հայաստան» օրաթերթ, 1978, հունվարի 10:

4 Լ. Խաչիկյան, Հայերը Հին Մոսկվայում, էջ 38: